CCMS «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ
Centre for Community Mobilization and Support NGO
ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի, Սայաթ-Նովա 14/35, 1702, ccms.ngo@gmail.com +374 94 93 50 53, www.armccms.org
1702, Sayat Nova 14/35, Alaverdi, Lori region, RA, ccms.ngo@gmail.com, +374 94 93 50 53, www.armccms.org

25.01.2022/05

ՀՀ Շրջակա միջավայրի նախարար
պարոն Հակոբ Սիմիդյանին,
ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության
«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն»
ՊՈԱԿ տնօրենի Ժ/Պ պարոն Խաչիկ Մարտիրոսյանին

Հարգելի՛ պարոն Սիմիդյան,
Հարգելի՛ պարոն Մարտիրոսյան,
Ստորև Ձեզ ենք ներկայացնում «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ից կարծիք 2022 թվականի հունվարի 20-ին ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան խոշորացված համայնքի Կաթնաղբյուր բնակավայրի վարչական նստավայրում «ԱՎ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Լոռու մարզի Արջիձորի հանքային դաշտի Մնկաձորի գունագեղ քարերի և ոսկու հանքերևակումների սահմաններում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 2-րդ հանրային լսման և ներկայացված հայտի վերաբերյալ, որը ձևավորվել է հանրային լսմանը մասնակցելու և ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան խոշորացված համայնքի Կաթնաղբյուր բնակավայրի բնակիչների հետ քննարկման արդյունքում:

1. 2022 թվականի հունվարի 20-ին ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան խոշորացված համայնքի Կաթնաղբյուր բնակավայրի վարչական նստավայրում տեղի ունենալիք «ԱՎ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Լոռու մարզի Արջիձորի հանքային դաշտի Մնկաձորի գունագեղ քարերի և ոսկու հանքերևակումների սահմաններում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 2-րդ հանրային լսման կազմակերպման գործընթացը պատշաճ չի իրականացվել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, չի ապահովվել բնակչության պատշաճ իրազեկումը և ներգրավումը հանրային լսմանը: Լսման մասնակիցների մի մասը իրազեկվել է լսումից մեկ-երկու օր առաջ, մի մասը անձամբ Օլեգ Դուլգարյանի միջոցով (այդ թվում Ստեփանավան համայնքի ավագանու անդամ Ջոն Կիրակոսյանը, ով Կաթնաղբյուրի բնակիչ է), իսկ մյուս մասը՝ Օլեգ Դուլգարյանի ֆեյսբուքյան գրառման և մամուլի միջոցով (օրինակ՝ Կաթնաղբյուր գյուղի բնակիչ Սուրեն Կիրակոսյանը): Արդյունքում հանրային լսման մասնակիցների թիվը չի հասել 30 մասնակցի, որոնցից առնվազն 10 հոգի այլ բնակավայրերից էին՝ հասարակական կազմակերպությունների, ՋԼՄ-ների, ՇՄ նախարարության և հայտը ներկայացրած ընկերության ներկայացուցիչներ:

2. Պատշաճ աշխատանք չի իրականացվել հանրային լսման վայրի պայմանների ապահովման հարցում: Հայտարարության մեջ ասվում էր, որ հանրային լսումը կայանալու է Ստեփանավան համայնքի Կաթնաղբյուր բնակավայրի վարչական

նստավայրում, սակայն երբ հասանք համայնք, պարզվեց, որ լսումները պետք է իրականացվեն Կաթնաղբյուրի դպրոցի դահլիճում: Մասնակիցները գնացին դպրոց, դահլիճում շատ ցուրտ էր, չէր ապահովվել ջեռուցում, սակայն մի փոքր անց հայտնի դարձավ, որ վարչական նստավայր են ժամանել ՀՀ ՇՄ նախարարության ներկայացուցիչները, ովքեր նշում են, որ քանի որ հայտարարության մեջ ասվում է՝ լսումները պետք է կայանան Կաթնաղբյուրի վարչական նստավայրում, ապա չի կարող շեղում լինել: Դրանից հետո մասնակիցները կրկին վերադառնում են Կաթնաղբյուրի վարչական նստավայր, որտեղ առկա է միայն մեկ փոքր աշխատանքային սենյակ: ՇՄ ներկայացուցիչը առաջարկում է լսումները իրականացնել կամ միջանցքում, կամ դրսում: Ելնելով այն հանգամանքից, որ միջանցքում ավելի ցուրտ էր, քան դրսում, որոշվեց լսումը իրականացնել դրսում՝ վարչական նստավայրի դիմաց: Կարևոր ենք համարում նշել, որ դուրսը ձյունածածկ էր և ջերմաստիճանը՝ ցածր: Այս պայմաններում որքան էլ ցանկանայինք՝ արդյունավետ լսումներ իրականացնել հնարավոր չէր, մասնակիցների մի մասը չդիմանալով ցրտին հեռացան, առաջինը հենց կանայք, և լսումներին մասնակցեցին հիմնականում գյուղի տղամարդիկ, իսկ կանայք հիմնականում ԶԼՄ ներկայացուցիչներ էին, ինչպես նաև ՏԻՄ ներկայացուցիչ:

3. Լսման ընթացքում «ԱՎ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ ներկայացուցիչը նշեց, որ հայտը կներկայացնի հակիրճ, սակայն «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ ղեկավար Օլեգ Դուլգարյանը խնդրեց, որպեսզի այն ներկայացվի մանրամասն: Սակայն այդպես էլ ոչինչ մանրամասն չներկայացվեց ընկերության ներկայացուցչի կողմից:

4. Լսման ընթացքում համայնքի բնակիչների, ՀԿ և ԶԼՄ ներկայացուցիչների հարցադրումներին ընկերության ներկայացուցչների կողմից բերվում էին հետևյալ փաստարկները. «Մեր երկրի հարստությունն է, պետք է շահագործենք, բա թողնենք ուրիշները շահագործե՞ն («Ուրիշներ» ասվածի տակ միայն ենթադրվում է, որ այդ տարածքը ապագայում էլ Հայաստանի Հանրապետությանը չի պատկանելու), «Այդ հողը մեկ է գյուղացիներին պետք չի, այն վարձակալությամբ տրված է ալավերդցիներին որպես արոտավայր», «Գյուղացին չի որոշում իրականացնել երկրաբանական ուսումնասիրություններ կամ հետո շահագործել հանքը, թե ոչ, այլ որոշողը պետությունն է», «Հանքարդյունաբերությունը միակ ոլորտն է, որի համար պետական դոտացիա չի տրվում, ուստի կարևոր է, որպեսզի հանքերը շահագործվեն»: Այս և նմանատիպ փաստարկները խորը մտահոգության տեղիք են տալիս ապագայում սոցիալական պատասխանատվության և շրջակա միջավայրի հոգատարության առումով:

5. ՇՄ նախարարության ներկայացուցիչները լսման սկզբում նշեցին, որ հայտի վերաբերյալ տարբեր գերատեսչությունների կողմից տրված տեղեկատվության արդյունքում պարզ է դառնում, որ տվյալ տարածքը, որտեղ նախատեսվում են ուսումնասիրությունները, առկա են արոտավայրեր, անտառ, հարուստ են բուսականությամբ, քաղցրահամ ջրերի աղբյուրներով:
Նույնը փաստեցին նաև գյուղացիները թե՛ լսումից առաջ, թե՛ լսման ընթացքում, և թե՛ դրանից հետո, որ նշված տարածքը, որտեղ ցանկանում են իրականացնել երկրաբանական ուսումնասիրություն, հանդիսանում է տարածաշրջանի

էկոհամակարգի կարևորագույն հանգույցներից մեկը, որտեղ առկա են արոտավայրեր և բազմաթիվ քաղցրահամ և հանքային ջրերի աղբյուրներ, և նշված տարածքում ուսումնասիրությունները և հանքարդյունաբերական գործունեության հեռանկարը կխաթարի ամբողջ տարածաշրջանի էկոհամակարգը, կնպաստի անասնապահության մարելուն:

6. Լսմանը մասնակիցների ճնշող մեծամասնությունը դեմ արտահայտվեց երկրաբանական ուսումնասիրություն իրականացնելուն, իսկ առկա մասնակիցներից փոքրաթիվ կողմնակիցները ակտիվ չէին կամ կարծիք չէին արտահայտում: Թեև արձանագրության մեջ, որը կազմվեց վարչական նստավայրում, և որի կազմմանը համայնքի բնակիչները չեն մասնակցել, գրված է, որ կարծիքները բաժանվել են կողմ և դեմ մասերի, լիարժեք չի արտացոլում լսման ընթացքը, ավելի ճշմարտացի կլիներ, եթե արձանագրության մեջ գրվեր հետևյալը, որ մասնակիցների ճնշող մեծամասնությունը դեմ էր երկրաբանական ուսումնասիրությունների իրականացմանը, կային նաև կողմ քաղաքացիներ: Տվյալ փաստարկը ստուգելու և համոզվելու համար հնարավոր է դիտել ՇՄ ներկայացուցչի կողմից իրականացված տեսանկարահանումը կամ էլ դիտել ուղիղ եթերի տեսանյութը ֆեյսբուքում՝ «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի պաշտոնական էջում հետևյալ հղմամբ.
https://www.facebook.com/armccms.org/videos/880756412578389

7. Լսման ավարտից հետո մասնակիցների մեծ մասը գնաց տուն, մի խումբ մնաց վարչական ղեկավարի նստավայրում և կազմեց կարծիք ՀՀ ՇՄ նախարարությանը և ՀՀ ՇՄ նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ ներկայացնելու համար: Կարծիքի մեջ Կաթնաղբյուր գյուղի բնակիչները մասնավորապես նշել են, որ իրենք դեմ են իրենց գյուղի վարչական տարածքում երկրաբանական որևէ ուսումնասիրության և հանքարդյունաբերական գործընթացի իրականացմանը, քանի որ ցանկանում են իրենց գյուղը պահպանել որպես էկոլոգիապես մաքուր, գյուղատնտեսական նշանակության տարածք, զարգացնել գյուղատնտեսությունը և զբոսաշրջությունը: Կարծիքի ներքո Կաթնաղբյուրի բնակիչները ստորագրել են, կից ներկայացնում ենք տվյալ փաստաթուղթը:

8. Հարկ ենք համարում նշել, որ առաջին լսումը ևս համայնքում պատշաճ չի կազմակերպվել, դրա վերաբերյալ փաստում է այն հանգամանքը, որ գյուղում ակտիվությամբ աչքի ընկնող բնակիչները տեղեկացված չեն եղել այդ լսման վերաբերալ, ինչպես նաև տեղեկացված չեն եղել հանրության այլ նեկայացուցիչներ, ինչպես հասարակական կազմակերպությունները և ԶԼՄ-ները:

10. Պետք է հաշվի առնել նաև այն, որ ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան խոշորացված համայնքի այդ տեղամասը արդեն իսկ ունի խորքային աղտոտվածություն, որը առաջացել է Արմանիսի հանքավայրի թափոններից, ինչը փաստվում է հասարակական կազմակերպությունների կողմից իրականացված փորձաքնություններով (https://arnika.org/ru/publikatsii/kartirovaniye-rasprostraneniya-tyazhelykh-metallov-i-stoykikh-organicheskikh-zagryazniteley-na-gorno-promyshlennykh-territoriyakh-tumanyanskogo-i-stepanavanskogo-regionov):

Կաթնաղբյուրը տվյալ աշխարհագրական գծի էկոլոգիապես մաքուր մնացած տարածքն է: Այդ տարածքում հանքարդյունաբերական գործընթացի հեռանկարը ռիսկեր է պարունակում Ստեփանավան խոշորացված համայնքի այդ հատվածը որպես գյուղատնտեսական և էկոլոգիական տարածք կորցնելու առումով:

Հարգելի՛ պարոն Սիմիդյան,
Հարգելի՛ պարոն Մարտիրոսյան,
Ելնելով վերոնշյալ փաստարկներից՝ առաջարկում ենք «ԱՎ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Լոռու մարզի Արջիձորի հանքային դաշտի Մնկաձորի գունագեղ քարերի և ոսկու հանքերևակումների սահմաններում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տալ բացասական եզրակացություն:

Հարգանքով,
Համայնքային Համախմբման և Աջակցության Կենտրոն ՀԿ
Նախագահ Օլեգ Դուլգարյան